ՆՈՐ-ԴԱՐ

№ 220 ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 24 Դեկտեմբերի **1886** Չորեքշաբթի 24 Դեկտեմբերի ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ № 220

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ դրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրությեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գառնը 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Պարբերական մամուլի բաժանորդները։
Քրոնիկոն. — Լուրեր։ Սալիանից էջմիածին (չարունակ.)։
Քաղաքական. — Լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Բանասիրական. — Չ'հաս է (չարունակ.)։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 23 Դեկտեմբերի 1886

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

—

Պարբերական մամուլի գործը Եւրոպայում և Ամերիկայում վերին աստիճանի զարգանալով, հրատարակուղ թերթերի թիւ ու համար չկայ։ Այդ երկրներում լրագիրները են հրատարակվում ակցիօներական ընկերութեամբ, լոյս են տեսնում շատ լրագիրներ պարզ առևտրական հաշուով, որոնց տէրերը թերթերին այն ուղղութիւնն են տալիս, ինչ որ իրենց նիւթական աւելի օգուտ է տալիս։

Կան թերթեր, որոնք որոշ կուսակցութիւնների ըերանն են, կան թերթեր, որոնք որոշ ուղղութեան են հետևում, դրա համար էլ որոշ կուսակցութեան պատկանողները, որոշ ուղղութեան, որոշ վարդապետութեան հետևողները անպատճառ բաժանորդ են այն թերթին, որի ուղղութեան համակրող, որի վարդապետութեան հետևողն են, թէպէտև իրենք կարդում էլ լինին այլ և այլ ուղղութիւն ունեցող կամ և ոչ մի ուղղութիւն չունեցող թերթեր։

Շատ հեռու պիտի գնայինք, եթէ կամենայինք խօսել եւրոպական պարբերական մամուլի դրութեան վերայ։ Մենք կամենում ենք այս անգամ մի քանի խօսքով ընդհանուրի, ուշադրութիւնը հրաւիրել մեր պարբերական մամուլի վերայ, որ դեռ իւր զարգացման մանկական շրջանումն է, թէպէտև դրժբաղդաբար ապականութեան նշաններ է ցոյց տալիս։

Մեր ազգային առաջադիմութեան չափը եթէ մեր պարբերական մամուլի դրութեամբ կամենանք որոշել, պէտք է որ շատ տխուր եզրակացութիւնների հասնենք։ Մի ուրիշ փոքր ժողովուրդ, մէկ երկու միլիօնից բաղկացած ժողովուրդ հրատարակուղ թերթեր է պահպանում տասն հազար բաժանորդներով, իսկ մեր ժողովրդի մէջ երկու կամ եթէ թերթի հազիւ թէ կարողանում են գոյութիւն ունենալ մի հազար բաժանորդով։

Անտարակոյս մեր ժողովուրդը քաղաքակրթութեան ասպարիզում դեռ առաջին քայլերը փոխելով, նրա մէջ պարբերական մամուլը կարող չէ իրրև առևտրական ձեռնարկութիւն գոյութիւն ունենալ։ Հայոց թերթերը առանձին կոչումն ունին բարոյապէս և մտաւորապէս առաջնորդելու հայ ժողովրդին. և դրա համար հայոց թերթերի խմբագիրները ոչ թէ միայն մտաւորապէս զարգացած, ուսումն առած, հոգով առողջ, իրենց պաշտօնը ստանձնելու փորձուած մարդիկ պէտք է լինին, այլ և անձնուրութեամբ գործող, այլ և իրենց գործը սիրող և նիւթական առանձին օգտի չսպասող մարդիկ պէտք է լինին։

Բայց այդ ամենը դեռ չէ ասում, որ մի թերթի գոյութիւնը, եթէ նա բաժանորդներ չունի կամ այնքան բաժանորդներ չունի, որ կարողանայ թերթի տպագրութեան և խմբագրութեան անհրաժեշտ ծախքերը ծածկել։

Հետևաբար բաժանորդագրութեան խնդիրը շատ կարևոր խընդիր է թէ մի թերթի խմբագրութեան տեսակէտից և թէ այն հասարակութեան տեսակէտից, որ այդ թերթի գոյութիւնը օգտաւէտ է համարում ազգի համար և անհրաժեշտ։

Այս խնդրի վերայ պարզ և ազնուաբար խօսելը, կարծում ենք աւելի լաւ է, քան թէ գոյութեան կռուից հալածուած անուղղակի և վատութեամբ հայհոյանքներ թափելը այնպէս, ինչպէս որ անում են մեր մի կարգ հրապարակախօսները։

Որոնք են հայոց թերթին բաժանորդ գրվում և ինչու համար։

Հայոց թերթին բաժանորդ գրուողներին կարելի է երեք կարգի բաժանել։

Ա.) Այն հայերը, որոնք որ, քան իրենց մէջտղը ներում է, ստանում են ամեն տեսակ պարբերական հրատարակութիւններ՝ ինչ ուղղութեան էլ որ պատկանում լինին, ազգասէր, անպէտք՝ թէ ճոխ և պիտանի բովանդակութեամբ էլ որ լինին, նրանց համար այդ ամենը նշանակութիւն չունի. բաւական է, որ հայերէն լեզուով և հայերէն տառերով են հրատարակուած։

Այդպիսիների թիւը սակաւ է։

Բ) Այն հայերը, որոնք լսում են ուրիշներից կամ իրենք տեսնում են, որ թերթը 10 րոպէի ժամանակ տարեկան և ամենից շատ համարներ է տալիս, նոյնպէս հեռագիրներ, ճոխ և հարկաւոր լուրեր, զանազան հետաքրքիր տեղեկութիւններ, մըտքի պաշարը հարստացնող յօդուածներ, քաղաքական տեսութիւններ, քաղաքական լուրեր, հետաքրքիր բանասիրականներ և այլն և այլն։

Այս կարգի բաժանորդները թերթի ուղղութեան վերայ շատ էլ ուշադրութիւն չեն դարձնում, այդ պատճառով թերթի առաջնորդողները գրանց համար այն նշանակութիւնը չունին, ինչ որ ունին գրանք այն բաժանորդի համար, որ թերթը ստանում է նրա ուղղութեանը համակրելով։

Ինչպէս ասեցինք, այս կարգի բաժանորդները թերթը ստանում են աւելի նրա համար, որ ամենից շատ համարներ է տալիս, բովանդակութեամբ ամենից հարուստ է և միևնոյն ժամանակ ամենից արժան—10 րուբլի է տարեկան։

Այս կարգի բաժանորդները քիչ չեն համեմատաբար, բայց թիւը որոշել կարելի չէ։

Գ) Այն հայերը, որոնք թերթի ուղղութեան համակրող, բնաճ ընթացքին հետևող են։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Չ'ՀԱՍ Է *)

Ի թ.

ՍԲԲԱԶԱՆԻ ՄՕՏ

—

Տէր-Գարեգինը հոգնոր ատեանից դուրս գալուց յետ, ուղղակի դիմեց Պետրոսի տունը։ Ճանապարհին նա զբաղուած էր Տէր-Սարգսի վերաբերութեամբ խորհրդածութիւններ անելով։—«Առաջին անգամն եմ տեսնում այդ քահանային այդ աստիճան անհամեստ։ Խօսում էր ինքն իրեն տէր հայրը։ Նրա ծանօթներից ոչ ոք չի հաւատալ՝ եթէ ասեմ նրան թէ այսօր Տէր-Սարգիսը հոգնոր ատենում դռում, գոչում էր իմ դէմ և այդ՝ մի ամենաչնչին խընդրի համար։ Երևում է որ այդ քահանան մի առանձին հաշիւ ունի Պետրոսի հետ և կամ դուցէ նա ծառայում է ուրիշների հաշուին, տեսնենք, երևի Պետրոսը կը պարզէ այս հանելուկը»...

Երբ Տէր-Գարեգինը մտաւ Պետրոսի մօտ, նա իւր հարսնացուի և զոյգ մայրերի հետ նստած ուրախ զրուցատրութիւն էր անում։ Տէր հօր գալուստը տեսնելով, բոլորն էր հետաքրքրութեամբ հարցրին. «Տէր-հայր, բարի լինի գալուստդ. պսակի հրամանագիրը բերիր»։ Տէր-Գարեգինը տատանուեցաւ և բարի ընտանիքի ուրախ տրամադրութիւնը չխանգարելու համար չգիտէր, թէ ինչ պատասխանել։

Տէր-հայրը որչափ անկեղծ և ճշմարտասէր, այնչափ խորագէտ և լրջահայեաց էր. նա երբէք չէր չատպուում յայտնել ճշմարտութիւնը այնտեղ, ուր կարիք չկար և ուր այդ ճշմարտութեան վաղաժամ յայտնութիւնը միայն ցաւ և տխրութիւն պիտի բերէր։

—Պսակի հրամանագիրը այդպէս վազ չեն տալիս, պատասխանեց նա հետաքրքիր ընտանիքին։ Ես ակայ դեռ Պետրոսից մի քանի տեղեկութիւններ ստանալու, որովհետև նրանք անհրաժեշտ են այդ հրամանագրի համար, և բացի այդ՝ Պետրոսին ինձ հետ կօնսիստոր տանելու, որովհետև նրանից բերանացի հարցմունքներ պիտի անեն այնտեղ։

—Եթէ ես ձեզ հարկաւոր եմ այնտեղ, գնանք ուրեմն առանց ժամանակ կորցնելու։ Նկատեց Պետրոսը. ես կամենում եմ, որ այդ հրամանագրի գործը ամենից շուտ վերջանայ։

—Շատ բարի, գնանք, ասաց տէր հայրը և երկուսը միասին դուրս եկան իակոյն։

—Տխուր նորութիւն պիտի յայտնեմ քեզ, Պետրէ, ասաց երիտասարդին Տէր-Գարեգինը, երբ նրանք արդէն ճանապարհին էին։

—Ի՞նչ տխուր նորութիւն. անհանգստութեամբ հարցրեց Պետրոսը։

—Քո պսակի համար հրամանագիրը չեն ուզում տալ։

—Պատճառ։

—Չհաստութիւն կայ ձեր մէջ։

—Ի՞նչ չհաստութիւն. ես դրա մասին մինչև անգամ ոչինչ չգիտեմ։

Տէր-Գարեգինը բացատրեց Պետրոսին նրա ազգակցական մերձաւորութիւնը օր. Աստղիկի հետ, որ վեց ճիւղից չէր անցնում։

—Եւ այդ չնչին մերձաւորութեան համար են ուզում չհաս անել մեզ։

—Այո։

—Եթէ ձեր բոլոր քահանաները ի մի չունչ և ի մի հոգի հաստատեն, որ այդ մերձաւորութիւնը չհաստութիւն է, դարձեալ ես նրանց հետ չեմ կարող համաձայնիլ։

—Ես նոյնպէս չեմ համաձայնուում, բայց քահանաները եթէ կամենան, կարող են այդ պատրուակաւ բաժանել ձեզ միմեանցից։

—Բաժանե՞լ մեզ, միմեանցից ... հա հա հա...

—Այո կարող են. մի ծիծաղիլ դուս, Պետրէ. ամեն բան կարող են անել նրանք, եթէ միայն կամենան։

—Դժոխքն անգամ եթէ փոխադրուի նրանց մէջ, դարձեալ նրանք մեզ միմեանցից բաժանել չեն կարող, յերմութեամբ բացագանչեց երիտասարդը։

Տէր-Գարեգինը ժպտաց, բայց այդ ժպիտը տխուր զգացմանց արտայայտութիւն էր. նա երիտասարդի անփորձութիւնը տեսնելով, խղճում էր նրան, բայց իւր խօսքերի բուն միտքը բացատրել նա առ այժմ աւելորդ համարեց։

—Դուս մի որև է հակառակութիւն ունիս Տէր-Սարգսի հետ, հարցրեց տէր հայրը Պետրոսին։

—Ո՛չ մի հակառակութիւն, բայց ինչու համար էք հարցնում, մի գուցէ նա է չհաստութեան մասին խօսողը։

—Այո։

—Հասկանում եմ այժմ, նա Մելքոն-աղայի տան քահանան է, և երևի նրա հրամանով է մեր մէջ չհաստութիւն ստեղծում։

—Բայց ինչ թշնամութիւն ունի քեզ հետ Մելքոն-աղան։

Պետրոսը պատմեց նրան բոլոր պատմութիւնը։

Տէր-Գարեգինը զարմանքից մնաց ապշած։

—Այո, այդպէս արաւ ինձ հետ իմ հօրեղբայրը, բայց այդ անգթութեան պատմութիւնը ես միայն իմ երկու բարեկամներին յայտնեցի և այժմ դուք երրորդն էք. այս խօսքերով վերջացրեց Պետրոսը իւր պատմութիւնը։

—Եթէ այդպէս է, ուրեմն Տէր-Սարգիսը պինդ պէտք է բռնէ իւր կուտակից, մեզ մնում է դիմել աւելի բարձր իշխանութեան, ասաց Պետրոսին Տէր Գարեգինը։

—Այսինքն ո՞ւմ։

—Առաջնորդին։

—Գնանք ուրեմն. ես հենց այս րոպէին կը ներկայանամ նորին սրբազնութեան։ Ես յոյս ունիմ, որ նա աւելի բարի կը գտնուի և չի մերժիլ իմ խնդիրը։

—Փորձենք, ասաց Տէր-Գարեգինը անվստահ ձայնով և երկուսը միասին դիմեցին դէպի առաջնորդարան։

Երբ նրանք ներս մտան Սրբազանի մօտ, Տէր-Սարգիսը բարեկարգչի հետ միասին արդէն կանգնած էր նրա առաջ։

Սրբազանը չատ սիրով ընդունեց Պետրոսին, յայտնելով իւր պատրաստականութիւնը նրա խնդիրը լսելու համար, և առաջարկեց նրան նստել։ Բայց Պետրոսը մնաց կանգնած, որովհետև քահանաները նոյնպէս օտքի վերայ էին։

—Ինչու չէք նստում, որդի, քաղցրութեամբ հարցրեց Սրբազանը։

---

*) Տես № 218.

— Ես ինձ ասում եմ, որ ինչ-որ մեկը պետք է ինձ ասի, թե ինչ է պատահել, որ ես հանկարծ այսքան հետաքրքրվում եմ Ռուբեն Ռուբենովիչ Ռուբենովի անձնական կյանքով, որ ես ինձ ասում եմ

ԱՐԱՐՈՎՍԿԱՅ ԶԱՎՈԴԻ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՊԵՏՐՈՍՈՎԻ

*) Տես № 219.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՀԱՐՈՒՍՏԱՑ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵՑՆ ՈՒ ՀԱՅԱԳՈՒՅՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ

Ի ՍԿԶԲԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՀՈՒՆ ԱՐՇԱԿԱՅԻ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆԻ

Ի ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

խաժամուժ ամբոխը տեղատարել։ Տաճարի ներքին դասաւորութիւնը մեզ ծանօթ է, թանձր սիւները, Իջման Ս. Սեղանը, հայրապետական աթոռները ինչն ըստ ինքեան սեղմում են աւագ սեղանի տեսարանը։ Այժմ այդ տեսարանը առաւել սեղմուած է։—Իջման Ս. Սեղանը, հայրապետական աթոռները տախտակամածով չրջապատուած են, որպէս զի խուժան ամբոխի ալիքներից չկորտակուին։ Տաճարը դատարկ է։ Պէտք է թափորն անցնի, որ ժամաւորները մտնեն։ Դռները ամրացած են կրկնակի։ դրսից պահպանում են զինաւորները։ Մտրակ է, որ չառաչում է անխնայ և դարձեալ դժուարութեամբ է գրոհ ամբոխի խըռմոնքի առաջն առնվում։ Տաճարից դուրս զինաւորներին է յանձնուած կարգապահութիւնը, ներսում թիֆլիսի համքեարներին, կարգադրուած է, որ հեռաւոր տեղերից եկողներին նախապատուհասն տրուի, իսկ հնացածներին երկրորդ, երրորդ տեղերը աստիճանաբար։

Բայց ահա զանգակները մի նոր եղանակով հնչում են։ «Խորհուրդ խորին»-ի ձայնը լսվում է։ Երկու անգամ մեր տեսած թափորական հանդէսը՝ չարժում է նոյն ճանապարհով, որ բաց են պահել երկու կարգ չարուած զինաւորների վաշտ։ Բայց այս անգամ այս թափորը առաւել հանդիսաւոր է ևփառաւոր։ Անհատիկ ձեռքերը համեստութեամբ կուրծքերին դրած, միւս ձեռքերին արծաթագունդ գաւազան՝ կարսիր զգեստը հագած կաթուղիկոսական շքեղութեամբ, որ պարսից չահերի տուած արտօնութեանց հնացորդներն են։ Նրանց ծանր քայլերին հետևում են ճերմակ չապիկներ հագին՝ երգեցիկ խումբը, որի դպրապետի քաղցրանուագ ձայնը «Խորհուրդ խորին»-ն է եղանակում։ Սրանց հետևում էին երկու կարգով տեղացի և ուխտ եկած քահանաներ, յետոյ արեղաներ և վարդապետներ։ Այս կարգի մէջ ընթանում են ջահընկալները և խաչվառիկ րոպները։ Նրանց ետևից չորս աւագ սարկաւագներ Տապանակները ձեռին՝ յետընթաց լըսն կարկում են մասունքներին և հայրապետական քողին։ Տաններկու եպիսկոպոսներ բոլորովին զգեստաւորուած և երկու կարգ չարուած րեռում են հետևեալ մասունքները. աջ կողմից՝ ս. Գեղարդը, ցակոբ Հայրապետի ս. աջը, Ծաղկանց հիւթը, Պետրոս Առաքեալի ճկոյթը, Արիստակէս հայրապետի աջը, Աւետարանը, Զախ կողմից Լուսաւորչի աջը, Գետադարձի աջը, Թովմայ առաքեալի աջը, Բալասանը, Թաղէի աջը, Աղանին հին միւռոնով։

Սրանց ետևից չապկազգեստ չորս դպիրներ բռնած ունին հայրապետական քողը, որի երկու կողմից բարձրացրած կրում են կաթուղիկոսական ձողաբարձ խաչը և գաւազանը։ Սրանից յետոյ գալիս էր չառագոյն ամպհովանու տակ վեհափառ կաթուղիկոսը՝ տեառնագրելով աչխարհախումբ բազմութիւնը այն ճաճանչաւոր քաւութեան նշանով, որի մէջ ամփոփած է կենաց փայտի մասունքը։ Վեհափառը զգեստաւորուած էր պատարագի զգեստով։ երկու եպիսկոպոսներ՝ որոնք պիտի սպասաւորէին, կերպասեայ ճերմակ չապիկներով, բազրաններով և փորուարներով՝ բարձրացրած կրում էին վեհափառի չուրջառի քղանցները։ Ամպհովանու չորս անկիւններից գնում են քչոցակալներ, իսկ ետևից կաթուղիկոսական գաւազանակիրը՝ հայրապետական ցուպը բարձր բռնած։ Թափորական հանդէսը փակում են այն ուխտաւորները, որոնց արտօնութիւն չնորհուած է հանդէսի ժամանակ եկեղեցում նախակարգ տեղ բռնելու։

(Կը չարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳԴԻ, 21 դեկտ.—Արդէն ձեզ յայտնի է այն ցաւալի դէպքի լուրը, որ տեղի էր ունեցել «Մարդ. Ընկ.» չէնքի մէջ։ Ռուսահայերի այդ անդրանիկ չէնքը հրոյ ճարակ դարձաւ։ Այդ չէնքի մէջ մտաւոր բարոյական պաչար վաստակող 200-ի չափ մտաղ սանւերը՝ այսօր լաց ու կոծով են նայում այն վայրի մոխիրին, որ մի օր առաջ նրանց սիրելի ընթերցարանն էր։ Ինչ և իցէ... եղածը դառն կորուստ է։ Այժմ ընտիր սպեղանիքի համար պէտք է մտածել, որով կարելի լինի այդ ղժալի «վէրքը ամոքել»։

Դեկտ. 20-ին, «Ընկերութեան» սըրտաբեկ պ. պ. ղեկավարները արտաքոյ կարգի նիստ կազմեցին պ. Մուսայէլ Շահկեհանեանցի տանը։ Նիստում որոշումներ արեցին չէնքի հիմնական վերանորոգութեան մասին, Միջին թուով ծախսը 20—25 հազար րուբլու կը հասնի։ Վճռեցին, որ հանգանակութիւն բանան։ Եւ հենց այդ դիշեր, մի ժամուայ մէջ հանդանակուեց 4000 րուբլի։

Զարմանք մխիթարական է, որ այդ պատկառելի «Ընկերութեան» հիմնադիր ալեզարդ անդամների սրտերում տակաւին վառ է մարդասիրութեան կրակը։ Նրանք նստի երեկոյեան մարդասիրաբար վճարեցին մի մի հատեատ գումար... պ. պ. Մուսայէլ Շահկեհանեանցից 500 րուբլի, Գէորգ աղա Լալայեանի երիտասարդ որդի Ցակոբ բէկը 1000 ր., Ներսէս Կրասիլնիկեան 1000 ր., Գրիգոր Թումայեան 500 րուբլի։ Բացի պ. պ. հիմնադիր անդամներից նուիրեցին եղ. Նաքաշեաններ 500 ր. և Եգոր Քալանթարեան 500 րուբլի։ Հանգանակութիւնը յաջողութեամբ չարունակվում է։

Ասում են, որ պ. Քալանթարեան պատրաստակամութիւն է յայտնել և իր մի ընդարձակ տունը ժամանակաւորապէս ձրի զիջել է տալու դպրոցի համար։

Բարեսիրտ պարոնի գովելի առաջարկութեան և՛ հետևել է պ. Ատուածատուր Տէր Ստեփանեանը...պատիւ սրանց։

Այսօր եկեղեցում ևս ազդու քարոզ խօսեց յառուկ այդ սրտաճմլիկ հըրդեհից առաջացած վնասին նպաստելու համար։ Մեր առատաձեռն համայնքը յուզուած սրտով աջակցեց այդ ազգապաչէն նուիրաբերութեան։

Ամենաուրախալի երևոյթը այն է, որ «Ընկերութեան» խոհուն պ. պ. ղեկավարների մէջ տակաւին փայլում է բարոյական հսկայ ոյժը, ազնիւ եռանդը, որ գործի մեծ գրաւական է։

Ցաջողցու ենք, որ յիչեալ հարուածից չեն վհատուիլ «Ընկ.» պ. պ. գործավարները և ի նկատի ունենալով իրենց չրջապատող առատաձեռն համայնքի չերմ աջակցութիւնը, յաջողութեամբ կը պսակեն իրենց ստանձնած վեհ պաչտօնը։

Նաև յոյս ունինք, որ կը նորէն չարգելի բազուաքնակ մեր ազգայինները, եթէ մենք համարձակվում ենք հրաւիրել և ուրիչ քաղաքների բարեբարեների աջակցութիւնը՝ այս սուրբ գործին օգնելու։

Ալ. Նալբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԱՂԱՓԱՆԱՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիայի արտաքին գործերի նոր մինիստր Ֆլուրանսը բոլղարական գործերին չատ մեծ նչանակութիւն է տալիս «Times»-ի ասելով։ Բոլղարական ճգնաժամը, ինչպէս և այն բոլոր յեղափոխութիւնները, որ կը կատարուին Բալկան թերակղզու վերայ, մեծ վտանգ են ներկայացնում եւրոպական խաղաղութեան համար։ Մանաւանդ այդ վտանգը ևւս նում է այն պատճառով, որ քանի՞նա խճճուի և երկարի, այնքան ևս ուելի պիտի մեծանայ և մեծ չրջան ընդունի։

—Րումինիայի լրագիրները հաղորդում են, որ իբր թէ իշխան Ալէքսանդրը մտադիր է հիւր գալ Րումինիա։

—«Нов.»-ին Սոֆիայից հեռագրում են, որ բոլղարական խնամակալութեան օրգանները ժողովուրդը զբաղեցնում են յօգուտ իշխան Ալէքսանդրին, խոստանալով, որ նրա իշխանութեան միջոցին հնարաւոր կը լինի Թրակիան, Բոլղարիան և Մակեդոնիան միացնել։

—Թրքական զինուորական ուսումնարաններում ռուսական լեզուի դասախոսութիւնը, սուլթանի հրամանով, պարտաւորեցուցիչ է դարձել։

—Անգլիական դեսպան սեր Ռեյմոլդ նչանաւոր խօսակցութիւն է ունեցել մեծ վէզիրի հետ։ Բանը նրանումն է, որ անգլիական ագենտները մեծ վէզիրի սենեկապետի մօտ գտել են մեծ նչանակութիւն ունեցող թղթեր։

—Սոֆիայի լենկերների ուսումնարանում վերջի ժամանակներս պատրաստուող ապստամբութեան պատճառները քննող զինուորական դատարանը Տեպովիչարով և Մակեդոնսկի կապիտաններին և Ստոյանով ու Գօբրով լենկերներին դատապարտել է առաջիններին երկու ամսուայ և վերջիններին երկու տարուայ բանտարկութեան։

—Ֆրանսիական պատերազմական մինիստր Բուլանժէի առաջարկութեամբ զինուորական մինիստրութեան համար պատգամաւորների ժողովից կը պահանջուի ոչ թէ 400 միլիոն ֆրանկ, այլ ինչ 43 միլիոն։ Այս բանը Բերլինի ֆրանսիական մինիստրի միջոցով յայտնեցին վիլհելմ կայսրին, որի համար կայսրը յայտնեց իր չնորհակալութիւնը։

—«Köln. Zeit»-ը հաղորդում է, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Իդըսլէյը Բ. Դրան պաչտօնական հարցումն է արել Սուլթանի յարաբերութիւնների մասին Ռուսիայի հետ, նախ լօնդոնում—թիւրքիայի դեսպան Րուստէմ-փաչայի միջոցով, իսկ յետոյ կ. Պոլսում—սեր Ռեյմոլդ միջոցով։

—Վիեննայում «Standard»-ի ասելով, այժմ խօսակցութեան նիւթը Անգլիայի Բ. Դրան ուղղած հարցն է։ Նրանք քննում են, թէ ինչ կանէ Անգլիան եթէ Բ. Դուռը անուչադիր թողնէ նրա հարցը։ կարծում են, որ այդ միջոցին անգլիական և իտալական միացեալ նաւատորմիղը ցոյցեր կանէ Կարմիր ծովի վերայ։

—Բելգրադից հեռագրում են, որ այնտեղ հարց է բարձրացել սերբ ուսանողներին Պետերբուրգ ուղարկելու մասին, բայց որը, սակայն, չէ ընդունուել Գարաչանինի սընդելով։

—Վիեննայից «Нов.»-ին հեռագրում են, որ բաւարական զինուորական մինիստրը չտապեցնում է, որ զինուորագրութեան նախագիծը չուտով կազմեն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նաւաբեկութիւն։ Համբուրգեան «Mexico» նաւը, որ դէպի Լիվերպուլ էր գնում, Մերսէյ գետի բերանում (Անգլիա) ծանծաղուտի պատահեցաւ։ Սարսափելի ալեկոծութիւն էր բարձրացել։ բայց չնայելով դրան, համարեա միևնոյն ժամանակ երեք աղատիչ նաւակներ ծով մտան չարաբաստիկ նաւին օգնելու։ «Mexico»-ին տեսել էին ճաչից յետոյ, մի փոքր հեռաւորութեամբ ափից։ Նա խարիսխ էր ձգել։ սարսափելի մրրիկը հիւսիսից փչում էր արևմուտ և նաւը, ըստ երևոյթին կուվում էր քամու դէմ։ Երեկոյեան նկատեցին, որ նաւը մօտենում է ափին, բայց վերայ հասնող մութը արգելք եղաւ դիտելու նրա չարժուձիները։ Երեկոյեան 9 ժամին ափից տեսան օդի մէջ հրային նչաններ, որ հաւանականօրէն «Mexico» նաւն էր թողնում—դրանով հասկացնել ուզելով, որ նաւը դժբաղդութեան է պատահել։ Սօութպօրթից օգնութեան ուղարկուած «Elisa Fernley» ազատիչ նաւը չուռ եկաւ հենց այն րոպէին, երբ արդէն 20 մետր էր մնացել «Mexico»-ին հասնելու։ Առաւօտեան ժամը 3-ին ծովի ալիքները ափ ձգեցին նաւակը, որի նաւաստիներից 5-ը նաւի խելքից բռնած ազատութեան միջոց էին պատռում, սակայն նրանցից միայն 2-ը ազատուեցան 5—6 ժամ ալիքների հարուածներին դիմանալու չափ ուժեղ լինելով. մինչդեռ 3-ը խեղդուեցան։ Երկրորդ ազատիչ նաւակը—«Laura Janet» դուրս գալով Սէյնթ Անեայից, նաւակը ծով մանելուց մի ժամ անցած, ափից տեսան օդի մէջ բարձրացող հրանչանները, որ ըստ երևոյթին «Laura»-ն էր իմաց տալիս իւր վտանգաւոր դրութիւնը։ Նչանը կրկնուեցաւ հեռու ծովում—և ոչինչ այլ ևս չտեսան այնուհետև, և երբ լուսացաւ, ոչ մի նաւակար ծովի երեսին։ Միւս օրը ճաչից յետոյ ծովի ալիքները ափ դուրս բերին 10 դիակներ, որոնք պատկանում էին «Laura»-ի նաւաստիներին։ Այդ ալեկոծութեան զոհ գնացին 27 հոգի։ Միայն Լամանից ուղարկուած ազատիչ նաւը հասաւ «Mexico»-ի մօտ և թագնուելով խորասուզուող նաւի կողքին, ազատուեցաւ կորուստից և ազատեց «Mexico»-ի վերայ եղողներին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 Դեկտեմբերի

ԲԵՐԼԻՆ. «Nordd. Allg. Zeit.»-ում տպուած է Կ. Պոլսից ստացուած լրագրը՝ անգլիական և ունգարական լրագիրների սուլթանի անձնաւորութեան վերայ արած յայտակումների դէմ։ Յօդուածը ասում է, որ Թիւրքիան հարկաւոր չէ համարում Ռուսիայի քաղաքականութեան դէմ գործելու, թէև նա իւր շահերը չի զոհել Ռուսիային։

ԼՕՆԴՕՆ. Բոլղարական պատգամաւորութեան հաւատացրին, որ Բոլղարիան կարող է հաստատապէս յոյս ունենալ Անգլիայի և Իտալիայի աջակցութեան վերայ։ Պատգամաւորութեան խորհուրդ տուին իշխան չընտրել, մինչև որ մեծ պետութիւնները համաձայնութիւն չեն կայացրել։

Գանձարանի կանցլերի պաշտօնը, որ թողել էր լորդ Չերչիլը, յանձն կառնէ Գօշէնը, որ Գլադստոնի կաբինէտում մինիստր էր։

Կ. ՊՕԼԻՍ. Այստեղ բոլղարական պատգամաւորութեան սպասում են ոչ կանուխ քան յունվարի կէսը, իսկ մինչի այդ ժամանակ Ֆ. Դուռը ոչ ինչ չի անել բոլղարական խնդրի վերաբերմամբ։

23 Դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ձանապարհների հաղորդակցութեան մինիստրին իւր լիսունամեայ յոբելեանի առթիւ բարձրագոյն հրովարտակով շնորհուած է Ալէքսանդր Նեվսկու բրիլիանտազարդ նչանը։

Նաւթային մասնաժողովը ընդունեց իւր մի քանի անդամների առաջարկութիւնը նաւթի վերայ ակցիզ նչանակելու օրինագծի մանրամասնութիւնները քննելու մասին, մինչև որ ֆինանսների և պետական կալուածների մինիստրները սկզբունքով որոշեն, թէ արդեօք անհրաժեշտ կարիք կայ այժմ նաւթային հարկ նչանակելու՝ թէ ուելի նպատակայարմար է յետաձգել նրան մինչև նաւթային արդիւնաբերութեան մշակման բերելոյ զարգանալը։ Այսպէսով մասնաժողովի աշխատութիւնները ժամանակաւորապէս դադարեցրած է։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ
ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ
(Երևանեան հրապարակում, Ծխնօվղոթվի տունը.)

Ընդունելութիւնը ամեն օր.
Առաւօտեան 9—10 ժամին Ս. Բախտաւոյ—կանանց և երեխաների հիւանդութիւնների։ 10—12 ժամին Կ. Բախտաւոյ—ներքին չղային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւն. 12—1 ժամին Գ. Քուչարեանց—արտաքին, վիրաբուժական, աչքի և վեներական (ծածուկ) հիւանդութիւններ։
Եքէկոյեանները 6—8 ժամը, իսկ չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։
Ամենայն օր քննվում են ծծմայրների և ծառաների առողջութիւնները և ծաղիկ են կարում։
Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոյեան 60 կոպէկ։
Ձքաւորները անվարձ։
Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.
10—6

ԿՕՓԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ ԵԻ ԸՆԿ.
(Ц. 4707) 51—43

Дозволено цензурою Тифлисъ, 23-го Декабря 1886 г. Տպարան Մ. Գ. Օսիփեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41